ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«28» նոյեմբերի 2014թ. N 210

ք. Արմավիր

«ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑ» ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱՐԳԸ, ԴՊՐՈՑԻ ՈՒ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.16-րդ կետի «ա» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին կից կրթության բնագավառում ստեղծված խորհրդակցական մարմնի առաջարկությունը.

որոշում եմ՝

1. Սահմանել «Տարվա լավագույն դպրոց» ամենամյա մրցույթի կարգը՝ համաձայն N1 հավելվածի:
2. Սահմանել դպրոցի և դպրոցի տնօրենի գործունեության գնահատման չափանիշները՝ համաձայն N2 հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ *Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ*

անցկացման հետ կապված իրավահարաբերությունները:

2. Մրցույթի նպատակն է բացահայտել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզային ենթակայության այն հանրակրթական դպրոցները, որոնց տնօրենների, դասավանդող մանկավարժների կողմից իրականացվել են ստեղծագործական աշխատանքներ, կիրառվել են կառավարման ժամանակակից միջոցներ ի բարօրություն դպրոցի, որոնք կարելի կլինի հետագայում կիրառել մարզի հանրակրթական ուսումնական մյուս հաստատություններում՝ տարածելով նշված դպրոցում իրականացվող ստեղծագործական ծրագրերի նախագծերը, փորձերը որպես նախադեպեր և տիպային օրինակներ, նպաստելով դպրոցների հետագա գործունեության զարգացմանը, ինչպես նաև հասարակության մեջ հանրակրթական դպրոցի հեղինակության բարձրացմանը:

3. Մրցույթը կազմակերպում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանը (այսուհետ՝ մարզպետարան):

4. Մրցույթն անցկացվում է 1 փուլով՝ մարզային:

5. Մրցույթն անցկացնում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին կից կրթության բնագավառում ստեղծված խորհրդակցական մարմնի կողմից (այսուհետ՝ խորհուրդ):

6. Մրցույթը սկսվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին՝ սեպտեմբերի 1-ին, արդյունքներն ամփոփվում են մինչև տվյալ ուսումնական տարվա ավարտը՝ մայիսի 25-ը:

7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի (այսուհետ՝ բաժին) կողմից հավաքագրվում և հետագայում խորհրդին է ներկայացնում Մրցույթի մասնակից դպրոցների երաշխավորագիր-բնութագրերը, որտեղ նշվում են տվյալներ թեկնածու դպրոցի տնօրենի, դասավանդող մանկավարժների կրթության, մասնագիտական և կազմակերպչական կարողությունների, մանկավարժական աշխատանքի ստաժի, տարբեր կրթական ծրագրերին ուսումնական հաստատության մասնակցության, արտաքին գնահատման արդյունքների, դպրոցի սովորողների՝ հանրապետական և միջազգային օլիմպիադաներին մասնակցության (առկայության դեպքում) վերաբերյալ, ինչպես նաև դպրոցի կառավարմանը, կրթության ոլորտի բարեփոխումներին վերաբերող տվյալներ (համակարգչային 2 էջի սահմաններում), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2014 թվականի հոկտեմբերի 22-ի N 210 որոշմամբ սահմանված դպրոցի և դպրոցի տնօրենի գործունեության գնահատման չափանիշները:

8. Մրցույթն անցկացվում է կլոր սեղան-բանավեճի շրջանակներում՝ խորհրդի կողմից առաջադրված թեմայի շուրջ:

9. <<Տարվա լավագույն դպրոց>> ընտրվում է այդ նպատակով խորհրդի կողմից հրավիրված նիստում, փակ քվեարկությամբ՝ խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

1) <<Ուսուցմադաստիարակչական աշխատանքային լավագույն գործի համար>>

2) <<Ռազմահայրենասիրական և աշխատանքային դաստիարակության լավագույն փորձի համար>>

3) <<Գեղագիտական դաստիարակության լավագույն փորձի համար>>:

11. Մրցույթն ամփոփվում է մինչև սեպտեմբերի 25-ը:

12. <<Տարվա լավագույն դպրոց>>-ը և մյուս անվանակարգերում հաղթողները պարգևատրվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի կողմից՝ <<Ուսուցչի տոնի>> նախօրեին:

13. <<Տարվա լավագույն դպրոց>> ճանաչված դպրոցը կարող է կրկին մրցույթին մասնակցել 2 տարի անց:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ***Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***

կտեմբերի 22-ի
N 210 որոշման

ԴՊՐՈՑԻ ԵՎ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

1. Դպրոցի տնօրենի կառավարչական հմտությունները՝
   1) մանկավարժական կոլեկտիվի կառավարումը.
   2) ֆինանսատնտեսական գործունեությունը.
   3) տնօեն-ծնողական, կոլեկտիվ-համայնք փոխգործակցությունը.
   4) կադրերի ընտրությունը.
2. Դպրոցում պարտադիր օգտագործման փաստաթղթերի օգտագործումը և գործավարությունը.
3. Մանկավարժական, ծնողական, աշակերտական, կառավարման խորհուրդների գործունեությունը, քննարկված հարցերի բովանդակությունը, ընդունված որոշումների կատարման վիճակը.
4. Դպրոցական շենքի պահպանության վիճակը, անվտանգության ապահովումը, ներքին ձևավորումը, բակի և սպորտհրապարակների վիճակը, կահավորումը: Ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, սպորտ դահլիճի կահավորումը, տրված գույքի առկայությունը, պահպանումը.
5. Գրադարան, համակարգչային դասասենյակ, դրանցից օգտվող աշակերտների և ուսուցիչների թվերը.
6. Զինվորական նախնական պատրաստության և զենքի պահման սենյակների վիճակը, ուսումնական զենքի առկայությունը, քաղաքացիական պաշտպանության միջոցների առկայությունը, շենքում առկա դեպի դուրս բացվող պահուստային ելքերը.
7. Դպրոցի ապահովվածությունը շուրջօրյա հոսող ջրով, սանհանգույցների վիճակը, սանիտարահիգիենիկ պահանջների կատարման վիճակը, հիգիենիկ նյութերի առկայությունը.
8. Սննդի կազմակերպման վիճակը, բուժկետի առկայությունը.
9. Պետականության անկյան կահավորումը, թեմատիկ պաստառների առկայությունը.

10. Աշխատանքային ներքին կարգապահության կանոնների առկայությունը և պահպանումը.
11. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և Մայր Աթոռի հետ համատեղ անցկացվող մրցույթներին մրցանակներ ստացած ուսուցիչների թիվը և տոկոսը.
12. Ուսուցիչների ատեստավորման, տարակարգի շնորհման գործընթացի կազմակերպումը.
13. Դպրոցի մատուցած ծառայությունները (նախադպրոցական, ներառական կրթության իրականացում, երկարօրյա խմբերի առկայություն).
14. Դպրոցում ուսումնական և դաստիարակչական աշխատանքների պլանավորումը, նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը.
15. Դպրոցի ուսումնական պլանի կատարման վիճակը, առարկայական և գեղարվեստական, սպորտային խմբակների առկայությունը և գործունեությունը.
16. Պարտուսի իրականացման վիճակը դպոցում, միջին առաջադիմությունը, ուսման որակը (մեդալի թեկնածուներ, գերազանցիկներ, երկտարեցիներ, չհաճախող և վատ հաճախող երեխաներ).
17. Միասնական քննություններին մասնակիցների թիվը և տոկոսը՝ շրջանավարտների ընդհանուր թվի նկատմամբ.
18. Դպրոցի աշակերտների մասնակցությունը առարկայական օլիմպիադաներին, հաջողությունները.
19. Դպրոցի աշակերտների մասնակցությունը արտադպրոցական սպորտային, մշակույթային, ռազմահայրենասիրական միջոցառումներին, հաջողությունները.
20. Դպրոցականների ժամանցի և հանգստի կազմակերպման վիճակը:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**